

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԽԱԶԻԿ ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**XIV-XV դարերի ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ**

Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ն. Զ. Դիլբարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Թ. Ս. Շահվերդյան**

բանասիրական գիտությունների թեկնածու
Ա.Լ. Յուզբաշյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական
մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. հունիսի 16-ին՝
ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող
ԲՈՂ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու՝

Ն. Սիմոնյան

ծեռագրերի հիշատակարանների լեզուն, որը մինչ օրս առանձին քննության չի առնվել: Այդ նպատակի համար առանձնացրել ենք հետևյալ չորս հիմնախնդիրները.

ա. բացահայտել հիշատակարանների կաղապարային բնույթը և վերջինիս ազդեցությունը գրիչների լեզվի վրա,

բ. պարզել նշյալ դարերի հիշատակարանների լեզվում հնչյունական և բառակազմական առանձնահատկությունները,

գ. ներկայացնել հիշատակարանների լեզվում հոլովման և խոնարհման համակարգերում կատարված փոփոխությունները գրաբարի համեմատությամբ,

դ. բացահայտել հիշատակարանների շարահյուսական և ոճական յուրահատկությունները:

ԱՆԵՆԱԽՈՒՄԻԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ուսումնասիրությունը կատարվել է XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ընծեռած լեզվական փաստերի հիման վրա: Հիշյալ դարերի հիշատակարանների լեզուն դեռևս գրաբար է, բայց համակարգային փոփոխությունների շեմին. առկա են զգալի թվով շեղումներ, որոնք բացատրելի են ոչ միայն միջին գրական հայերենի կամ բարբառների ազդեցությամբ, այլև հաճախ սխալագրություններով:

ԱՆԵՆԱԽՈՒՄԻԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: XIV-XV դարերի հիշատակարանների լեզուն առաջին անգամ է գիտական առանձին հետազոտության նյութ դարձել: Ատենախոսության մեջ XIV-XV դարերի հիշատակարանների լեզվական իրողությունները նկարագրվել, արժևորվել և վերլուծության են ենթարկվել հնչյունական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական և ոճական մակարդակներում: Վիճակագրական, կառուցվածքային աղյուսակների և գծապատկերների միջոցով ներկայացված են քննվող աղբյուրների լեզվական բնութագծերը, որոնք պայմանավորված են հիշատակարանների յուրօրինակ բնույթով:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, ոճագիտության, ձեռագրագիտության և այլ բնագավառների հետազոտողների համար:

ԹԵՄԱՅԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐԿԱԾՈՒԹՅԱՆ ԱՄՍԻՃԱՆԸ: Հիշատակարաններին՝ որպես հայ մատենագրության ուրույն տեսակի, լեզվական տեսանկյունից առաջին հերթին անդրադարձել են հայ բառարանագրությամբ զբաղվողները: Սակայն վերջիններս չէին կարող ամբողջությամբ քարտազրել հիշատակարանների բառամթերքը, քանի որ մինչև 19-րդ դարավերջ և 20-րդ դարասկիզբ ձեռագրացուցակների ամբողջական և համակարգված հրատարակություններ չեն եղել, ուստի քարտազրումը կատարվել է միայն իրենց ձեռքի տակ եղած ձեռագրերից: Այդ սկզբունքով են աշխատել «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի կազմողները (1836-1837թթ.), որոնք բառարանի աղբյուրների մեջ գրում են. «Յիշատ: Յիշատակարանք հին մատենից, և արձանագրութիւնք՝ յանուն տուողաց ինչ ինչ՝ ի յիշատակ եկեղեցեաց և վանորէից»²:

«Հայերեն արմատական բառարան»-ի աղբյուրներում Հր. Աճառյանը ևս նշում է հիշատակարանները. «Յիշատակարաններ զանազան ձեռագրերի, որոնք հրատարակուած են զանազան գրքերում. ամեն անգամ յիշատակելով տեղը. ինչ. Հնոց և Նորոց...»³: Աճառյանը հիշատակարաններին անդրադարձել է նաև «Հայոց անձնանունների բառարան»-ի կազմության ժամանակ՝ դուրս գրելով հարյուրավոր նոր անձնանուններ:

² ՆՅԲ, հ. I, եր., 1979, էջ 16:

³ ՀԱԲ, հ. I, եր., 1971, էջ 46:

2000 թվականին հրատարակված Նորայր Բյուզանդացու բառարանի «Անուանք մատենագրաց եւ մատենագրութեանց» բաժնում դարձյալ հիշատակարանները նշված են որպես աղբյուր⁴:

Դետաքըքիր է, որ Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ի աղբյուրների մեջ հիշատակարանները նշված չեն⁵, սակայն բառարանի հոդվածները վկայում են այն մասին, որ Մալխասյանցը քաջածանոթ էր ինչպես հայերեն ձեռագրերին, այնպես էլ հիշատակարաններին:

Հիշատակարանների բառամթերքը քննության նյութ է եղել նաև մերօրյա այն բառարանագիրների համար, ովքեր անդրադարձել են գրաբարի կամ միջին հայերենի բառային կազմին: Հիշատակարանները որպես աղբյուր նշված են Ռ.Ղազարյանի և Յ.Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում⁶, ինչպես նաև Լ. Հովհաննիսյանի կազմած «Գրաբարի բառարան»-ում⁷:

Գրաբարի և միջին հայերենի նոր բառարանների կազմության ժամանակ բառարանագիրները հիշատակարաններին անդրադառնալու ևս մեկ հնարավորություն ունեցան, քանի որ 20-րդ դարի երկրորդ կեսին լայն թափ ստացավ հիշատակարանների ժողովածուներ ստեղծելու գործընթացը:

Հիշատակարանների հավաքման ու հրատարակման հարցում անգնահատելի է Ղևոնդ Ալիշանի, Ղևոնդ Փիրղալեմյանի, Գարեգին Հովսեփյանի, Լևոն Խաչիկյանի, Արտաշես Մաթևոսյանի, Վազգեն Հակոբյանի, Աշոտ Հովհաննիսյանի ինչպես նաև առանձին ձեռագրացուցակներ կազմողների և հրատարակողների (Նորայր Պողարյան, Սահակ Ճեմճեմյան, Խաչիկ Ղադյան, Հրաչյա Աճառյան, Երվանդ Լալայան և ուրիշներ) դերը:

Առանձին գրքերով են հրատարակվել Ե-ԺԲ., ԺԳ., ԺԴ., ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները: ԺԵ. դարի հիշատակարանները հրատարակված են մասամբ միով, իսկ ԺԶ. դարի հիշատակարանները ցայսօր ամբողջությամբ հավաքված և հրատարակված չեն:

Գրավոր այս հուշարձանների հրատարակմանը զուգահեռ՝ լեզվական առանձնահատկությունների վրա ուշադրություն են հրավիրում նախ և առաջ հիշատակարանների հրատարակիչները կամ առանձին ձեռագրացուցակներ կազմողները, որոնք իրենց աշխատանքին զուգահեռ՝ առաջաբաններում որոշ դիտարկումներ են անում նաև լեզվաբերականական տարբեր երևույթների մասին և կարևորում դրանց հետագա ուսումնասիրությունը⁸: Ի մասնավորի՝ Լ. Խաչիկյանը գրում է. «Բայց գրիչների մեծամասնությունն անտարբեր է մնացել ընդօրինակվող կրոնական բովանդակությամբ ձեռագրերի նկատմամբ, և օգտագործել է ամեն պատեհ առիթ, ձեռագրի մի անկյունում կամ դատարկ մնացած մի քանի տողերի վրա, բարբառախառն ու կենդանի լեզվով

⁴ Ն. Բիւզանդացի, Բառգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԵ դարուց, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեան, Ժնեւ, 2000, էջ 759:

⁵ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. Ա., Եր., 1944, առաջաբան էջ Ժ-ԺԳ:

⁶ Ռ. Ա. Ղազարյան, Յ.Ա. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 6:

⁷ Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայակազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010, էջ 11:

⁸ Տե՛ս Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար, Եր., 1984 էջ 5, Վ.Հակոբյան, Ա.Հովհաննիսյան, Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.), հ. Ա Եր., 1974, առաջաբան, էջ ԻԱ և այլուր:

դիմելու ընթերցողներին...»⁹: Ահա այդ «բարբառախառն ու կենդանի» լեզուն է, որ լեզվաբանների համար դառնում է ուսումնասիրության և համեմատության աղբյուր քերականական տարբեր երևույթների համար:

Սակայն հիշատակարանների ժողովածուների հրատարակումից հետո դեռ երկար ժամանակ վերջիններիս բանասիրական խոր քննություն չի կատարվում:

Միջնադարյան քերականական մտքի պատմությամբ և քերականների մեկնությունների ուսումնասիրությամբ զբաղվողները (Շահան-Ջրպետ, Գարեգին Ջարբահանայան, Գաբրիել Ավետիսյան, Լևոն Խաչերյան, Գևորգ Ջահուկյան և ուրիշներ) տարբեր առիթներով անդրադարձել են ձեռագրերի լեզվական և քերականական առանձնահատկություններին, գրչության կենտրոններին, գրչության արվեստին, դպրոցներին, սակայն նրանք հիմնականում կատարել են ընդհանուր դիտողություններ: Մասնավորաբար գրչության արվեստի մասին խոսելիս Լևոն Խաչերյանը վերջինիս մեջ առանձնացնում է «լեզվա-քերականական տեսությունը, որը ձեռագրերը ճիշտ արտագրելու և անսխալ կարդալու օրենքներ ու կանոններ է սահմանում»¹⁰: Եվ իսկապես, գրչության կենտրոններում շատ մեծ ուշադրություն էր դարձվում հենց քերականությանը, որի շնորհիվ էլ միջնադարում զարգացում է ապրում քերականական միտքը: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը ընդգծում է. «Կլիկիկայում քերականության նկատմամբ հետաքրքրության աճը մեծ չափով բխում է հենց ձեռագրերը ճիշտ վերարտադրելու, ձեռագրերի ուղղագրությունը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից»¹¹:

Սակայն որքան էլ նշյալ ուսումնասիրողները տարբեր առիթներով անդրադարձել են ձեռագրերի լեզվին, այնուամենայնիվ նրանք հիմնականում չեն տարանջատել հիշատակարանների լեզուն բուն ձեռագրի լեզվից: Մինչդեռ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ գործ ունենք լեզվական տարբեր որակների հետ:

1980 թվականին լույս է տեսնում Դ. Բախչինյանի «Հայկական ձեռագրերի հիշատակարանները» աշխատությունը, որտեղ հեղինակը մանրամասն քննում է հայերեն ձեռագրերի հիշատակարանները որպես միջնադարյան գրական մի առանձնահատուկ ժանր: Ներածության մեջ նա առավել հանգամանալի կերպով ներկայացնում է «իշատակարան» հասկացությունը և վերջինի կիրառությունը հայ մատենագրության մեջ¹²: Ճիշտ է, իր աշխատանքում գրականագիտական ուսումնասիրությանը զուգահեռ Բախչինյանն անդրադառնում է նաև լեզվական որոշ հարցերի, ինչպես օրինակ գրիչների լեզվա-ոճական հնարանքներին, լեզվի պատկերավորման միջոցներին և այլն, սակայն աշխատանքն առաջին հերթին գրականագիտական է:

1993 թվականին ՊԲՀ-ում տպագրած հոդվածով հիշատակարաններին է անդրադառնում նաև Ալ. Մարգարյանը: Նա դժգոհություն է արտահայտում, որ հիշատակարանների լեզվական կողմի ուսումնասիրությանը բավարար չափով ուշադրություն չի դարձվել. «Այդ նյութերը (*Նկատի ունի հիշատակարանը- Խ. Դ.*), սակայն ինչ-ինչ պատճառներով լայն ու համակողմանի քննության չեն արժանացել... Իսկ դա, իհարկե, ներելի չի կարելի համարել, որովհետև հայերեն ձեռագրերի հիշատակարաններն

⁹ Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կ. Ա, Եր., 1955, առաջաբան, էջ LV:

¹⁰ Լ. Գ. Խաչերյան, «Գրչության արվեստի» լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Եր., 1962, էջ 12:

¹¹ Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 225:

¹² Դ. Գ. Բախչինյան, Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Եր., 1980, էջ 5-6:

իրենց հերթին ու պարզորոշ հայերենի ոչ միայն այն ժամանակվա իրավիճակը, այլև պատմական զարգացման ընթացքը, նրանում կատարված տեղաշարժերն ու փոփոխություններն են պատկերում»¹³: Հավելենք, որ Ալ. Մարգարյանն իր այս հոդվածում 500 նոր բառ է առանձնացրել 14-15-րդ դարերի հիշատակարաններից, որոնք տեղ չեն գտել մինչ այդ հրատարակված բառարաններում:

Հիշատակարանների լեզվական քննության անդրանիկ օրինակները¹⁴ Լիանա Հովսեփյանի և Գևորգ Ջահուկյանի աշխատություններն են «Հանդես հայկական հիշատակարանների» շարքի մեջ¹⁵, որոնք հիմք են դրել հիշատակարանների լեզվական հետազոտության: Շարքի մեջ մտնում է ևս մեկ հետազոտություն, որը կատարել է Արտաշես Մաթևոսյանը, սակայն այն լեզվական քննություն չէ և ներկայացնում է հիշատակարանները որպես մշակութային սկզբնաղբյուր¹⁶:

Լ. Հովսեփյանի հիշյալ աշխատությունն առաջին միակն է, որում քննության է առնված հիշատակարանների լեզուն առանձին դարաշրջանով: Քննության առնելով 13-րդ դարի հիշատակարանների լեզուն լեզվաբանը հանգում է այն եզրակացությանը, որ տվյալ դարաշրջանի հիշատակարանների լեզուն առավելապես գրաբարն է. «Նոր ձևավորված գրական միջին հայերենի կողքին շարունակում էր որպես գրական լեզու կիրառվել և գրաբարը»¹⁷, ապա շարունակում. «XIII դարի հիշատակարանների լեզվում նկատվում են ինչպես գրաբարյան և միջինհայերենյան համակարգերի փոխներթափանցում, այնպես էլ ժամանակի ընթացքում գրաբարի համակարգի մեջ կատարված ներքին փոփոխությունների արտացոլում»¹⁸:

Լեզվական մյուս քննությունը կատարում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը: Վերջինիս ուսումնասիրության նպատակը հիշատակարաններում բարբառային երևույթների վերհանումն է եղել, թեև արձանագրենք նաև Ջահուկյանի մասամբ միով հիասթափությունը. «Թվում է, թե հայ ձեռագիր հիշատակարանների լեզվի պատմական ուսումնասիրությունը կարող է շատ նոր նյութեր տալ միջին գրական հայերենի ու աշխարհաբարի պատմության, այլև հայերենի բարբառային երևույթների տարածական ու ժամանակային բաշխման համար... համակարգչային մշակումը այդ սպասելիքը հարկ եղած չափով չարդարացրեց»¹⁹:

Մասամբ համաձայն լինելով անվանի լեզվաբանի այս «հիասթափությանը»՝ ատենախոսության մեջ մանրամասն քննել ենք այն պատճառները, որոնք զգալի ազդեցու-

¹³ Ալ. Մարգարյան, Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV-XV դդ. հիշատակարաններում, ՊԲՀ, 1993, 1-2, էջ 35:

¹⁴ Ինչպես նշել ենք, հիշատակարաններին տարբեր ձևով անդրադարձել են, հիշատակարանները նաև աղբյուր են եղել հայ բառարանագրության համար, սակայն լեզվի վերաբերյալ առանձին քննություն չի եղել, և այս ասպարեզում նշյալ աշխատություններն առաջինն են:

¹⁵ Լ. Հովսեփյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր., 1997, Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր., 1997:

¹⁶ Տե՛ս Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Եր., 1998:

¹⁷ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ. էջ 10:

¹⁸ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ. էջ 23:

¹⁹ Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր., 1997, էջ 8:

թյուն են ունեցել հիշատակարանների լեզվի վրա և հանգեցրել լեզվական բավական խառը պատկերի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԶԵՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի կողմից: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի տպագրած հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ ատենախոսությունը բաժանել ենք հետևյալ գլուխների և ենթագլուխների.

Ներածություն. հայերեն ձեռագրերի հիշատակարանները որպես հայոց լեզվի պատմության ուսումնասիրության աղբյուր: Հարցի պատմությունը,

Գլուխ Ա. Հայկական ձեռագիր հիշատակարանի պատմությունը. սկզբնավորումը և զարգացումը,

Գլուխ Բ. XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվի հնչյունական և բառակազմական հիմնական բնութագիրը,

ա. Հնչյունական բնութագիրը,

բ. Բառակազմությունը XIV-XV դարերի հիշատակարանների լեզվում,

Գլուխ Գ. Հոլովումը XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվում,

Գլուխ Դ. Խոնարհումը XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվում,

Գլուխ Ե. Ոճական և շարահյուսական առանձնահատկությունները XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում,

ա. Շարահյուսական առանձնահատկություններ,

բ. Ոճական առանձնահատկություններ,

Ամփոփում:

Աշխատանքի վերջում տրված են համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերը:

Ներածություն բաժնում՝ «*Հայերեն ձեռագրերի հիշատակարանները որպես հայոց լեզվի պատմության ուսումնասիրության աղբյուր. հարցի պատմությունը*», ներկայացված է գրավոր այս աղբյուրների լեզվական քննության պատմությունը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու նշանակությունը, ինչպես նաև արձանագրված է հիշատակարանների լեզվի ուսումնասիրության անհրաժեշտությունն ըստ առանձին դարաշրջանների: Ներածության մեջ հարկ ենք համարել համառոտ անդրադառնալ նաև XIV-XV դարերի պատմական կարևոր այն իրադարձություններին, որոնք իրենց կնիքն են թողել ժամանակի ձեռագրական կենտրոնների վրա. այդ ամենի ամփոփական վկայությունն են քննվող շրջանի հիշատակարանները:

Գլուխ Ա: Հայկական ձեռագիր հիշատակարանի պատմությունը. սկզբնավորումը և զարգացումը: Ատենախոսության առաջին գլխում ներկայացրել ենք հայերեն ձեռագրերի հիշատակարանների զարգացման պատմությունը: Հիշատակարանների վերաբերյալ այս գիտելիքները հնարավորություն են տալիս բացատրելու մի շարք իրողություններ, որոնք էական ազդեցություն են թողնում ոչ միայն հիշատակարանների կառուցվածքի կամ բովանդակության վրա, այլև մեծ չափով ազդում են վերջիններիս լեզվի և ոճի վրա: Համեմատական նյութերի հիման վրա հայտնել ենք այն կարծիքը, որ հայերեն ձեռագրերում հիշատակարանները մուտք են գործել ձեռագրերի ստեղծման առաջին օրերից՝ դառնալով ձեռագրի կարևոր բաղկացուցիչ միավոր: Այս հարցում հնարավոր ենք համարում նաև հունական ձեռագրակերտման ավանդույթների ազդեցությունը նախնական փուլում: Ժամանակի ընթացքում ենթարկվելով գրավոր ինքնու-

րույն մշակման IX-X դարերում ստեղծվում են հիշատակարանների «կատարյալ» մոտիվներ, ինչպես օրինակ «Լազարյան» (887թ.), «Թարգմանչաց» (966թ.), «Ծուղղութի» (974թ.) ավետարանների հիշատակարանները: Գրավոր այս հուշարձանները կրել են նաև մի շարք փոփոխություններ ինչպես ձևային, այնպես էլ բովանդակային առումով: Ժամանակի ընթացքում փոփոխվել է նաև հիշատակարան գրելու արվեստը: XIV-XV դարերում (գուցե ավելի վաղ), անկախ գրչի կրթական մակարդակից, ձեռագրում հիշատակարանի կարևորությունը ստիպում է, որ գրչության կենտրոններում աստիճանաբար ձևավորվեն հիշատակարանի կաղապարներ, որոնք, մեր կարծիքով, էապես ազդել են նաև գրիչների լեզվի վրա:

Գլուխ Բ: XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվի հնչյունական և բառակազմական հիմնական բնութագիրը: Երկրորդ գլուխը բաղկացած է երկու առանձին ենթագլուխներից: Առաջին ենթագլխում «*Հնչյունական բնութագիրը*», քննության ենթ առել XIV-XV դարերի հիշատակարաններում վկայված երևույթների իրողությունները: Հիշատակարանների հնչյունական համակարգում վկայված երևույթների քննությունը պահանջում է որոշակի զգոնություն, քանի որ բազմաթիվ են գրչագրական և ուղղագրական սխալները, որոնք առաջին հայացքից կարող են տարըմբռնում և շփոթ առաջացնել: Մյուս կողմից բարբառների առումով հնչյունական երևույթների քննության հարցում շատ կարևոր է տեղայնացումը, սակայն հիշատակարանների դեպքում պետք է նկատի ունենալ, որ գրիչները կարող էին տեղափոխվել մի վայրից մյուսը՝ ստեղծելով նորանոր մատյաններ: Ուստի և, ինչպես գրում է Հովհաննես Մուրադյանը. «...ձեռագրերի մեջ հանդիպող լեզվական երևույթները միշտ չէ, որ պետք է հատկացնել այն վայրի լեզվին, որտեղ կատարված է ձեռագրի ընդօրինակությունը: Շատ հաճախ գրիչը (արտագրողը) ծնունդով այլ վայրի ներկայացուցիչ է, և հասկանալի է, որ նրա արտագրած ձեռագրում թույլ տված լեզվական շեղումները ոչ մի առնչություն չունեն ձեռագրի արտագրության վայրի լեզվի հետ»²⁰:

Մեր աշխատանքի ընթացքում փորձել ենք մշտապես կարևորել այս հանգամանքը սխալ ընդհանրացումներից հնարավորինս խուսափելու համար:

Ձայնավորներ: Ա - Ա ձայնավորի մի քանի որակական փոփոխություններ են վկայված XIV-XV դարերի հիշատակարաններում՝ 1. Միջնավանկի *ա-ի* անկում - քաղաք>քաղքի (ԺԴ,355), պակասեց>պակսեց (ԺԵ,Բ,75), ասացեք>ասցեք (ԺԵ,Բ,127), էժանութին>էժնութին (ԺԵ,Ա,280) և այլն: Միջնավանկի *ա-ի* անկմանը է բացատրելի նաև անցյալ կատարյալի հոգն. 3-րդ դեմքի *ացին* (ԺԵ,Բ,360) տարբերակը («ասացին» իմաստով). առաջին քայլում միջնավանկի *ա-ի* անկումից հետո երկրորդ քայլում *ց-ից* առաջ ընկնում է նաև *ւ-ն*՝ ասացին>ասցին>ացին: Որ փոփոխությունը հենց այս ճանապարհով է ընթացել, ապացուցվում է մի քանի այլ հիշատակարաններում վկայված *ասցել*, *ասցեք* (ԺԵ,Բ,127, 137, 215, ԺԵ,Գ,185 և այլուր) տարբերակներով: 2. **Ա>ը** - նահանգել>նըհանգել (ՄՄ 6262, 355բ,1426թ., վայրը անհայտ): 3. Մեկ օրինակով է վկայված նաև **ա>ե** հնչյունափոխությունը. «...և մեր յոյժ երեխտաւորին» (ԺԴ,75):

Ե ձայնավոր: 1. Ե>ի - երեց>իրիցու (ԺԴ,330), *իրիցական* (ԺԴ,348), *իրիցկին* (ԺԵ,Ա, 616) բառերում, որտեղ հնչյունափոխությունը գործում է բառասկզբում և բառամիջում: Այս հնչյունափոխության որպես հիմնական պատճառ նշվել է հաջորդող *ր-ն*, սակայն այլ օրինակները վկայում է են, որ *ե>ի* փոփոխությունը պայմանավորված չէ *ր-ով*²¹: Այդ

²⁰ Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 15:

²¹ Մանրամասն տես Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 117-119:

երևում է նաև հիշատակարաններում մեկ անգամ վկայված *Իգիպտոսի* բառում²², որտեղ բառակազմում ունենք *ե>ի* հնչյունափոխություն. *ե* ձայնավորին այստեղ հաջորդում է ձայնեղ *զ* պայթակազմը: 2. Մի քանի օրինակով վկայված է *ե>է* հնչյունափոխությունը, ինչպես՝ *չձմ հիշել* (ԺԴ,22), *տվէր է* (ԺԵ,Ա,314), *չէ դիպէր* (ԺԵ,Բ,144), *խնդրեցէք* (ԺԵ,Գ,423): Այս փոփոխությունը պետք է բացատրել *ե* և *է* ձայնավորների հնչույթային մերձավորությամբ: Հակառակ երևույթը՝ *է>ե*, խիստ սահմանափակ կիրառություն ունի: Հիմնականում հանդիպում է *տէր* և նրանով բաղադրված բառերում, ինչպես՝ *տէր* (ԺԵ,Ա,550), *տանուտէր* (ԺԴ,226), *տէրութիւն* (ԺԵ,Ա,176):

է ձայնավոր: *է>ի* - Հնչյունափոխության այս տեսակը տարածված էր և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում՝ մեջ>միջի (ԺԴ,107), սեր>սիրոյ (ԺԴ,593), հրեղէն>հրեղինաց (ԺԵ,Ա,13) և այլն: Մեկ անգամ վկայված է «*մէջերկրայս*» (ԺԴ,51) բառը, որտեղ սպասվող *է>ի* հնչյունափոխությունը չի կատարվել: Դարձյալ մեկ վկայություն ունի *է>ա* հնչյունափոխությունը՝ «պակին»(չբէկին) (ԺԵ,Բ,30) ձևով («...*յիշխանութեան Սուլէյման պակին...*»): Գուցե սխալագրության հետևանք է:

Սակավաթիվ վկայվածություն ունեն ձայնավորից առաջ *է*-ի անկման կամ սղման դեպքերը, ինչպես՝ «*Թ'իմ հայրն ու մայրն*» (ԺԵ,Գ,21) կամ «*Տես թ'ինչ արար*» (ԺԵ,Գ,22): Երկու դեպքում էլ գործ ունենք *թէ* շաղկապի *է* ձայնավորի անկման հետ, որն արտահայտվում է ապաթարցով: Սա կարելի է բացատրել նաև արտագրության կրճատ գրության պահանջով, որը միշտ կարևոր հանգամանք է եղել ձեռագիր գրելու ժամանակ:

ի ձայնավոր: 1. *ի>ը* - միտը>մտաը (ԺԴ,7), ձեռագիր>ձեռագրես (ԺԵ,Ա,12), սիրտ>սրտի (ԺԵ,Ա,60): 2. **ի+ա** - Բառաբարդման ժամանակ բառավերջի *ի-ն* ա հոգակապին միանալով ձևավորում է նոր հնչյուն՝ *ե*, ինչպես՝ հոգեհանճար (ԺԴ,7), հոգեզան (ԺԴ,337), հոգեհրաւեր (ԺԴ,489): 3. Որոշ դեպքերում *ի-ն* շեշտի դիրքի փոփոխությամբ սղվում է, ինչպես՝ *երկնահամրէս* (ԺԴ,263), *գեղեցկայարմար* (ԺԵ,Ա,413): 4. Մեկ անգամ վկայված է *ի>ե* հնչյունափոխությունը *պեղծ* բառում՝ «*Այս պեղծ խորհուրդս, որ կայ ի յիս...*» (ԺԵ,Բ,27): 3. Մուրադյանը սույն հնչյունափոխության ևս մեկ վկայություն է բերում XIII և XIV դարերի հիշատակարաններից՝ *լուսանեղծ*(*չլուսահեղծ*) ձևով²³: Մեր կարծիքով այս դեպքում ոչ թե *ի>ե* հնչյունափոխություն է եղել, այլ տեղի է ունեցել *յ* ձայնորդ հնչյունի անկումը միջձայնավորային դիրքում: Այդ երևում է նաև տարբեր դարաշրջանների այլ օրինակներից, որտեղ վկայված է *լուսայեղծ* բառը՝ «*ցանկացաւ ի եղաք այսմ լուսայեղծ և կենսակիր... աւետարանիս*» (ԺԴ,98): ՆՀԲ-ում սույն բառը բացատրված է այսպես. «*Իբր լուսալիր, ընկղմեալ ի լոյս*»²⁴: Հիշատակարաններում վկայված են նաև *իմաստայեղծ* և *հանճարայեղց* բառերը, որը ցույց է տալիս *յեղց(ծ)* արմատի («լի, լեփ-լեցուն» իմաստով²⁵) կենսունակությունը. «...*ըստացաւ զմարգարտաշար զիմաստայեղծ եւ զանառիկ փարթամութիւնս...*» (ԺԵ,Բ,233): Ինչ վերաբերում է *լուսահեղծ* բառին, ապա այն ՆՀԲ-ում, ԳԲ-ում և ԱԶ-ում վկայված չէ, թեև այդ ձևով գործածվել է ինչպես XIV, այնպես էլ XV դարի հիշատակարաններում՝ *լուսահեղծ* (ԺԴ,437, ԺԵ,Գ,390 և այլն): Այս ձևով բառը նշված է միայն Լ. Հովհաննիսյանի բառարանում և բացատրված է այսպես. «Լուսե իղծեր պարունակող»²⁶: Այսպիսով, կարելի է

²² Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմեց Անուշահում վարդապետ Դանիէլեան, Անթիլիաս, 1984, էջ 37:

²³ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 123:

²⁴ Տե՛ս ՆՀԲ, հ. I, 898: Նույն էջում նշված է նաև *ի-ով* գրությունը՝ *լուսահեղծ*:

²⁵ ՀԱԲ, հ. III, էջ 395:

²⁶ Լ.Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010, էջ 131:

ասել, որ *լուսաեղծ* բառում *ի>ե* հնչյունափոխություն չի եղել (կազմությունը՝ *լոյս+ա+եղց(ծ)*), և կատարված փոփոխությունը երկու ձայնավորների միջև *-ի* անկումն էր:

Ու ձայնավոր: 1. *ու>ը*. ըստ որում *ը*-ն կարող էր գրվել կամ չգրվել: Բառասկզբում՝ *յըղղորդ* (ԺԴ,156), *յղարկեաց* (ԺԴ,477), *յղարկէ* (ԺԵ,Բ,282): 2. Բառամիջում շեշտագրկվելիս *ու*-ն հնչյունափոխվում է գաղտնավանկ *ը*-ի՝ *հուրք>հորոյ* (ԺԵ,Ա,12), *խունկ>խնկալի* (ԺԵ,Ա,12): 3. Մինևույն հիշատակարանի մեկ նախադասության մեջ երկու անգամ վկայված է *ու>ո* հնչյունափոխությամբ *ուրիշ>որիշ* ձևը (ԺԴ,157): Դժվար է ստույգ նշել՝ արդյոք սա բարբառային երևույթ է (հմմտ. դրբ. ուրիշ>օրիշ, ուզում>օզում). հիշատակարանի գրչության վայրն էլ անհայտ է: Ավելի հավանական ենք համարում, որ վկայված *որիշ* ձևը *որոշ* բառի գրչագրական տարբերակն է²⁷:

Ո ձայնավոր: Քննվող աղբյուրներում *ո*-ի փոփոխության մեկ-երկու դեպք է վկայված. *ո*-ի սղման օրինակ է *պարնութիւն* բառում (ԺԵ,Բ,168): *Ո>ու* հնչյունափոխություն է կատարվել *կաթուղիկոս* (ԺԴ,68) և *Լամպրուն* (Ն.ս.) բառերում:

Երկբարբառներ: Այ - 1. *այ>ա* - բառամիջում՝ *մայր>մարն* (ԺԴ,27), *կարդայք>կարդաք* (ԺԴ,518), բառավերջում՝ «...*իմաստանա, քաղցրանա...*» (ԺԵ,Գ,397): 2. *Այ>է* - բառասկզբում *այն>էն* (ԺԵ,Բ,240), *բառամիջում՝ ցանկանայր>ցանկէր* (ԺԴ,207):

Ա - X դարի վերջերին լատինական այբուբենից անհրաժեշտաբար վերցվում է օ տառանշանը²⁸, և այդ շրջանից սկսած՝ *աւ* երկբարբառը գրության մեջ արդեն հիմնականում արտահայտվել է «օ»-ով (կարօտ, աղօթք և այլն)՝ զուգահեռ պահպանելով նաև գրչագրական մյուս տարբերակները (*աւ* և *ո*): Սակայն *աւ>օ* համապատասխան գրության համաբանությամբ «օ» է գրվել նաև այնպիսի դեպքերում, որտեղ *աւ*-ը չի ունեցել երկբարբառային արժեք և չի հնչվել որպես [օ]: Այդպիսի օրինակները հավանաբար կարելի է բնութագրել որպես գրաբարյան գերծջգրություններ, ինչպես՝ *մերծօոր* (ԺԵ,Ա,323), *ստացօ* (ԺԵ,Ա,399), *կրօնօորի* (ԺԵ,Բ,15) և այլն:

Եա - 1. *Եա>ե* - *խոշորութեան>խոշորութեն* (ԺԴ,61), *յամսեանս>յամսենս* (ԺԴ,63), *շնորհեց* (ԺԵ,Գ,119), *ապսպրեց* (ԺԵ,Գ,121): 2. *Եա>ա* - *եկեղաց* (ԺԴ,13, փխ. եկեղեաց), *տեղաց* (ԺԴ,15, փխ. տեղեաց):

Ոյ - 1. *Ոյ>ո* - «...*վասն կարդալոյ կամ աւրինակելոյ*» (ԺԴ,70): 2. *Ոյ>ու* - *իրիցոյ>իրիցու* (ԺԴ,205), *բարձրելոյն>բարձրելուն* (ԺԵ,Բ,357): 3. *Ոյ>ի* - *քոյր>քիր* (ԺԵ,Բ,360), *թոյլ>թիլացաւ* (Ն.ս.):

Իւ/եւ - 1. *Իւ>ու* - *Սիւնեաց>Սունեաց* (ԺԵ,Ա,63), *հիւսն>խուսն* (ԺԵ,Բ,313), *իւրեանց>ուրենց* (ԺԵ,Ա,506): 2. *Իւ>ի* - *իւր>իր* (ԺԴ,74, վկայված է այս մեկ օրինակը): 3. *Եւ>ե* - *գեւդ>գեղ* - *գեղի* (ԺԵ,Ա,291), *գեղիմ* (ԺԵ,Բ,293):

Հիշատակարանների լեզվում փոփոխության են ենթարկվում նաև գրաբարյան եռաբարբառները (*եայ, եաւ, տոյ, հայ*). եռաբարբառների պարզեցման միտումներն առկա էին դեռևս գրաբարում:

Իոյ - XIV-XV դարերի հիշատակարաններում նշյալ եռաբարբառի կողքին առատորեն վկայված են *տոյ>ոյ>ո/ու* հնչյունափոփոխության օրինակները, ինչպես՝ «...*յիշատակ հոգո իւրոյ*» (ԺԴ,32) կամ «...*փառս տացուք Յօր և Որորոյ և Սուրբ Յոգոյն*» (ԺԵ,Բ,50), «*յիշատակ իւր հոգուն*» (ԺԵ,Ա,402): Այսպիսով, *տոյ>ոյ>ո/ու* հնչյունափոխական շղթան ամբողջությամբ վկայված է քննվող աղբյուրներում:

Եայ - Այս եռաբարբառի հնչյունափոխությունը (*եայ>է*), որ գործում էր դեռևս գրաբարում, միջին հայերենի շրջանում անփոփոխ է մնում: Հիշատակարաններում վկայ-

²⁷ Հմմտ. ՀԱԲ, հ. III, էջ 581, 585, 616:

²⁸ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 173-175:

ված են այդ հնչյունափոխության որոշ օրինակներ, որոնցից առավել տարածվածը *քրիստոնեայ>քրիստոնէին* (ժԵ, Գ, 14) ձևն է:

Եալ - Գրաբարյան այս եռաբարբառի հնչյունափոխության տիպերից հիշատակարաններում վկայված են *եալ>ել* և *եալ>եօ* փոփոխությունները: Ըստ որում, եթե *եալ>ել* հնչյունափոխությունը բացատրվում է շեշտակորույս լինելու դեպքում *ա*-ի անկմամբ (առաջեալ>առաջև ժԵ, Գ, 16), ապա *եալ>եօ* փոփոխությունը պետք է բացատրել երկբարբառի ընդունված փոփոխությամբ՝ *ալ>օ*: Այսինքն՝ *ե-ն* չի գիտակցվել տվյալ հնչյունակապակցության միավոր, ինչպես՝ *չարեօք ժԴ, 160, մախնեօք* (ժԵ, Ա, 11), *այեօք* (ժԵ, Ա, 302), *կենդանեօք* (ժԵ, Ա, 303), *կարծեօք* (ժԵ, Ա, 580) և այլն: Այս երևույթը վկայված է դեռ գրաբարյան շրջանի բնագրերում:

Իայ եռաբարբառը հիմնականում հնչյունափոխվում է *ե*-ի կամ մնում անփոփոխ: Երկու տիպն էլ վկայված է հիշատակարաններում: ***իայ>ե*** - *ի մենակեցաց* (ժԵ, Ա, 574), *մենակ* (ժԵ, Ա, 658) և այլն: Մյուս կողմից ունենք ամհնչյունափոխ ***իայ*** եռաբարբառ, ինչպես՝ *միայնակեց* (ժԴ, 273):

Հիշատակարաններում ձայնավորների, երկբարբառների ու եռաբարբառների վերոնշյալ փոփոխություններն առավելապես օրինաչափ են՝ բացառությամբ որոշ շեղումների: Սակայն երբեմն փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ոչ թե լեզվական այս կամ այն վիճակով (գրական, խոսակցական, բարբառային), այլ սխալագրությանը կամ գրիչների թերուսությամբ: Այս երևույթն ավելի ակնառու է բաղաձայնների ուսումնասիրության ժամանակ. քննվող շրջանի հիշատակարաններում բաղաձայնների փոփոխությունները համակարգային բնույթ չեն կրում. դրանք առանձին բառերում վկայված ձևեր են: Ուստի բաղաձայնների փոփոխությունները համակարգված ներկայացնելու համար առանձնացրել ենք չորս հիմնական խումբ՝

1. ***Չայնեղների շնչեղ խլացում*** - **բառամիջում**՝ բ>փ- *ալիեղա* (ժԵ, Բ, 304), գ>ք- *թարքմանեցին* (ժԴ, 639), դ>թ- *անխարթախ* (ժԵ, Ա, 5), **բառավերջում**՝ գ>ք- *շղք* (ժԵ, Ա, 652), *փափաք* (ժԴ, 51), դ>թ- *խարբերթ* (ժԵ, Գ, 11), ջ>չ- *կնոչ* (ժԴ, 623), *մաւրքոյչ*, (ժԵ, Բ, 449), *նորայբողբոջ* (ժԵ, Գ, 15),

2. ***Շնչեղ խուլերի ձայնեղացում*** - **բառասկզբում**՝ փ>բ- *բցուն* (ժԴ, 63), *բոխարեն* (ժԵ, Գ, 77), թ>դ- *դանաք* (ժԵ, Գ, 12), **բառամիջում**՝ ց>ծ- *ընթերծողք* (ժԵ, Բ, 371), ք>գ- *երեգալեան* (*երեգալեան... ծփեր* ժԴ, 51), թ>դ- *ընդերնուք* (ժԴ, 70), **բառավերջում**՝ չ>ջ- *աստուածաշունք* (ժԵ, Գ, 71),

3. ***Չայնեղների խլացում*** - **բառասկզբում**՝ գ>կ- *կունբեթ*, *կիր* (ժԵ, Բ, 360), դ>տ- *տեգերեալ* (ժԵ, Բ, 253), **բառամիջում**՝ գ>կ- *ի նահանկեն* (ժԴ, 6), *անկամ* (ժԴ, 28), դ>տ- *էտկար* (նաև գ>կ, ժԵ, Բ, 219), *անտրանիկ* (ժԵ, Բ, 449), ձ>ծ- *անծկալի* (ժԵ, Ա, 5), **բառավերջում**՝ գ>կ- *հինկ* (ժԵ, Գ, 21), դ>տ- *յիշողացտ* (ժԵ, Բ, 225), ձ>ծ- *տանծ* (ժԵ, Գ, 289)

4. ***խուլերի ձայնեղացում*** - **բառամիջում**՝ պ>բ- *պաբուն* (ժԵ, Ա, 398), կ>գ- *ցանգալի* (ժԴ, 61), *մանգունս* (ժԴ, 115), տ>դ- *ընդիր* (ժԴ, 243), *ճշդել* (ժԴ, 443), ծ>ձ- *գձագրեցի* (ժԴ, 442), *ընծայ* (ժԵ, Բ, 312) և այլն:

Նշենք ձայնորդների հնչյունափոխությունները, որոնք վկայված են հիշատակարաններում.

Ս>ն - ձայնորդ այս բաղաձայնի հիմնական փոփոխությունը արտահայտվում է խոնարհման համակարգում՝ հոգնակի առաջին դեմքում, ինչպես՝ *չգիտենք* ժԴ, 425, *կամք* (ժԵ, Բ, 260):

Յ - այս կիսաձայնը մի քանի փոփոխություններով է վկայված. 1. ***Յ>հ*** - *հիշել* (ժԴ, 22), *հոգնամեղ* (ժԴ, 69): 2. ***Յ-ի անկում*** - *քահանաի* (ժԴ, 50), *ընծաեցաւ* (ժԴ, 66), *վաելունն* (ժԵ, Ա, 99): 3. ***Յ-ի հավելագրություն*** - *ի յայրս* (ժԵ, Ա, 31), *ի յաղաւթս* (ժԵ, Ա, 372), *գերայիռչակ* (ժԴ, 26), *բազմայչարչար* (ժԴ, 77) և այլն:

Ո>ր և **Ռ>ռ**: Սակավ օրինակներով են վկայված և սահմանափակվում են հիմնականում հետևյալ ձևերով. **ռ>ր** - *մորացայ* (ԺԴ,38), *ընդերուք* (ԺԴ,70), **ր>ռ** - *ծմեռան* (ԺԴ,15), *դռան* (ԺԵ,Ա,116):

Սեկ-երկու օրինակներով հանդիպում են **Ֆ** և **փ** հնչյունների փոփոխություններ, ինչպես *փռանկաց* (ԺԴ,239), *ֆիլիսոֆայի* (ԺԵ,Ա,468):

XIV-XV դարերի հիշատակարաններում առատորեն վկայված է **հ>խ** փոփոխությունը, որ հատուկ է հայերենի մի շարք բարբառների (Վան, Խոյ, Բայազետ և այլն) և համակողմանի քննության է առնվել այդ բարբառների ուսումնասիրությամբ զբաղվողների կողմից: Օրինակներ՝ հալալ>խալալ (ԺԴ,650), նահատակեցալ>նախատակեցալ (ԺԵ,Բ,102): Սեկ անգամ վկայված ենք գտնում նաև հակառակ փոփոխությունը՝ *խ>հ*. «... *զմանք գինի հմենք...*» (ԺԵ,Բ,79):

Հնչյունափոխական մյուս երևույթներից վկայված են առնմանումը (աշխոյշ (ԺԴ,568), որտեղ առաջին շ-ի աղեցությամբ ձայնեղ շփական **ժ**-ն վերածվել է խուլ շփական **շ**-ի (ժ>շ), զանկակ (ԺԵ,Գ,71) բառավերջի խուլ պայթական **կ**-ի աղեցությամբ **զ**-ն կորցրել է իր ձայնեղության հատկանիշը՝ դառնալով խուլ պայթական **կ**), տարնմանումը (սրախողձող (ԺԵ,Բ,281)), դրափոխությունը՝ *խարապատին*<*ախրապատին* (ԺԵ,Բ,115), *կարմունք* (ԺԵ,Գ,257), համաբանությունը՝ *սեկտնբեր* (ԺԵ,Բ,346) - հոկտեմբեր բառի համաբանությամբ, *խրապկերեն* (ԺԵ,Գ,24) - պարսկերեն բառի համաբանությամբ: Հնչյունի, վանկի կորուստ կամ ամփոփում է նկատվում *կոշկար* (ԺԵ,Բ,112), *շնհաւոր* (ԺԵ,Բ,290) բառերում: Սակավ օրինակներով են վկայված նաև հետևյալ հնչյունափոխությունները՝ **խ>ղ** - վաղճանեցալ (ԺԴ,6), **ղանուբեան** (ԺԵ,Ա, 585), **ղ>խ** - **թուխթ** (ԺԵ,Ա,652), **Ձ>ս** - քարտիտի (ԺԵ,Գ,199):

Երկրորդ ենթազխում «*Բառակազմությունը XIV-XV դարերի հիշատակարանների լեզվում*», քննված են գրավոր այս աղբյուրներում վկայված բառակազմական հիմնական կաղապարները, բառապաշարի շերտերը: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ամենալայն կիրառությունն ունեն **SjS** կաղապարն (արմատ+հոդակապ+արմատ) ու նրա ենթատեսակները (օր.՝ *հմաստապածոյծ* (ԺԴ,489)- *SjS- իմաստ+ա+պածոյծ*, *քրտնավաստակ* (ԺԵ,Բ,172)- *SjS- ք(ի)րտն+ա+վաստակ*, *մեծափափագում* (ԺԴ,587)- *Sj(Sa)- մեծ+ա+փափագ+ում*): Հիշատակարանների լեզվում, ըստ կիրառության, առաջին տեղն են զբաղեցնում գրաբարյան կազմությունները (60%), ապա՝ միջինհայերենյան կազմությունները (30%), որոնց հաջորդում են միջինհայերենյան շրջանում կատարված փոխառությունները (10%)²⁹ : Օտար բառերի կիրառության տեսանկյունից ամենամեծ թիվը կազմում են արաբերեն (50%) և պարսկերեն (35%) բառերը, ապա թուրքերեն (10%) և եվրոպական լեզուներից փոխառած բառերը (5%): Քննության արդյունքում գտել ենք մոտ երեք տասնյակ նորահայտ բառեր, որոնք վկայված չեն գրաբարի կամ միջին հայերենի բառարաններում: Ատենախոսության մեջ այս ամենը պատկերված է համապատասխան գծապատկերներով և աղյուսակներով:

Գլուխ Գ: Հոլովումը XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվում: Քննվող հուշարձաններում հայերենի հոլովման պատկերը բազմաձև է: Գրավոր այս հուշարձաններում մեր ուշադրությունն առավելապես կենտրոնացրել ենք գրաբարյան կանոններից շեղվող օրինակների և միջինհայերենյան նորակազմությունները բացահայտելու ուղղությամբ: Քննել ենք ինչպես անվանական, այնպես էլ

²⁹ Բառաշերտերի կիրառության տոկոսային հարաբերությունը կազմել ենք մեր կողմից քարտավորված առանձին բառացանկերի համաձայն, որոնց ճշգրտման համար հինք են ծառայել ՆՅԲ-ի, ԳԲ-ի և ՄՅԲ-ի տվյալները:

դերանվանական հոլովման պատկերը: Առանձին ենք ներկայացնում նաև գրաբարյան անկանոն կամ զարտուղի հոլովում ունեցող բառերի թեքումը քննվող աղբյուրներում:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ

ա. XIV-XV դարերի հիշատակարաններում հոգնակերտների կիրառության հաճախակցությամբ ամենամեծ թիվը կազմում են գրաբարյան **-ք-**ն կամ նրանով բաղադրված հոգնակերտները (շուրջ 78%), վերջիններիս հաջորդում են **-եր/-ներ** հոգնակերտները (մոտ 15%), ապա **-նի** (5%) և **-ան** (2%) հոգնակերտները: Հոգնակի կազմությանը մասնակցող մյուս մասնիկները վկայված են սակավաթիվ օրինակներով:

բ. Նշյալ շրջանի հիշատակարանների լեզվում առկա է ուղղական և հայցական հոլովների նույնացման միտումը, որն աշխարհաբարում արդեն ամրակայվում է: Որպես տարբերակող հատկանիշ մնում է *զ* նախդիրը, քանի որ սպասվող ք/ս հերթագայությունը հոգնակի թվում շատ հաճախ չի կատարվում, օր.՝ «*Ձպատուելի և գարբասեր քահանայքն...*» (ԺԴ,227):

գ. *Սեռական և տրական* հոլովների կազմության հարցում հիմնական շեղումը գրաբարի համեմատությամբ հոլովատիպերի փոփոխությունն է: *Ի* արտաքին թեքումն աստիճանաբար դառնում է ընդհանրական, պարզեցվում են խառը թեքումները: *-Ոջ* վերջավորությամբ սեռական և տրական հոլովների ձևերը խիստ սակավ վկայվածություն ունեն: Խառն է հատուկ անունների հոլովման պատկերը: Անկանոն կամ զարտուղի հոլովումները նա պարզեցվում են:

դ. Բացառական հոլովը քննվող շրջանի հիշատակարանների լեզվում առավելապես նախդրավոր կառույց է, սակայն անմախդիր բացառականի բազմաթիվ օրինակները վկայում են սույն հոլովի աստիճանական պարզեցման մասին, օր.՝ «*...որ է հիւսիսոյ կողմանէն*» (ԺԵ,Բ,34):

ե. վկայված օրինակները ցույց են տալիս, որ գործիական հոլովում աստիճանաբար ամրակայվում է *-ով* հոլովակերտ մասնիկը:

զ. Ներգոյական հոլովը էական փոփոխություններ չի կրում, այն հիմնականում նախդրավոր կառույց է. առավելապես կիրառվում է *ի + հոգն. հայց. կառույցը*: *-Ուն* վերջավորությամբ մի քանի բառ է վկայված XIV-XV դարերի հիշատակարաններում (*երկրուն, քաղաքուն, գեղուն, յայսպիսում*):

է. Դերանունների կիրառության տեսանկյունից ամենամեծ թիվը կազմում են ցուցական և ստացական դերանունները: Գրաբարյան ձևերին զուգահեռ՝ վկայված են միջինհայերենյան դերանվանաձևեր: Աստիճանաբար նկատելի է *մեք* անձնական դերանվան փոփոխությունը *մենք*-ի:

ը. Քննվող գրավոր աղբյուրներում առատորեն վկայված են ստացական, ցուցական և դիմորոշ հոդերը, սակավ քանակությամբ վկայված է նաև միջինհայերենյան *մի* անորոշ հոդը:

թ. Ածականը և թվականը գոյականների հետ առավելապես նախադաս դիրքում են գործածվում և սովորաբար չեն համաձայնում հոլովով ու թվով. սա հանգեցնում է այդ կարգերի վերացմանը ածական և թվական խոսքի մասերի համար:

ժ. Մակբայները, շաղկապները և եղանակավորող բառերը զգալի փոփոխություններ չեն կրում սույն աղբյուրներում:

Այսպիսով, մեր կարծիքով, XIV-XV դարերի հիշատակարաններում հոլովման պատկերը դեռևս գրաբարյան է, սակայն գրաբարյան ձևերի կողքին առատորեն վկայված են միջինհայերենյան կառույցները, որոնք ուրվագծում են լեզվի զարգացման ընթացքը:

Գլուխ Դ: Խոնարհումը XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվում: Խոնարհման պատկերը քննվող շրջանի հիշատակարաններում կրկին ներկայանում է որպես ժամանակի լեզվական տարբերակվածության, գրաբարախառն կառույցների համադրություն, որտեղ դարձյալ զգալի տեղ են զբաղեցնում գրիչների

սխալագրությունները: Հայոց լեզվի պատմության այս շրջանի լեզվական անմիօրինակությունը հատուկ է ոչ միայն ձեռագրերի հիշատակարաններին, այլև գրավոր այլ հուշարձաններին և մատենագրական երկերին: Առաջին և կարևոր պատճառը թերևս գրական երկու լեզուների՝ գրաբարի և միջին հայերենի ոչ լիարժեք իմացությունն էր:

Ատենախոսության այս գլխուն ներկայացրել ենք դերբայների, բայական եղանակների ու ժամանակաձևերի, ինչպես նաև գրաբարում անկանոն կամ զարտուղի խոնարհում ունեցող բայերի փոփոխությունները XIV-XV դարերի հիշատակարանների լեզվում: Ըստ այդմ՝

ա. Քննվող աղբյուրներում վկայված են հայերենի բոլոր դերբայներն իրենց համապատասխան փոփոխություններով, որոնք ուրվագծում են համակարգի զարգացման ընթացքը: Գրաբարյան չորս դերբայներին զուգահեռ (անորոշ, ենթակայական, ապառնի և անցյալ)՝ գրիչներին ազատորեն գործածում են դերբայական նոր ձևերը՝ վաղակատար - *պահել* (ԺԴ,334), *հաներ* (ԺԴ,637) հարակատար - *գրած* (ԺԴ,280), *հաւաքած* (ԺԵ,Ա,139), Ժխտական - *չէր* *ի տալ* (ԺԴ,545), *չէր իմանալ* (ԺԵ,Բ,285): Ըստ որում՝ դերբայներից ամենաշատ կիրառությունն ունի վաղակատարը³⁰: Եզակի օրինակներով վկայված են նաև հայերենի անկատար դերբայի -*ուծ*-ով և -*խւ*-ով ձևերը, որոնք հատուկ են արդեն լեզվի զարգացման աշխարհաբարյան փուլին:

բ. Բայակազմությանը մասնակցում են գրաբարյան բոլոր բայածանցները: Ըստ որում՝ ամենամեծ հաճախականությունն ունեն սուկածանցները, իսկ ամենասակավոր՝ բազմապատկականները: Չուգահեռաբար կիրառվում են պատճառական ածանցի և՛ գրաբարյան (-*ուցան*), և՛ միջինհայերենյան ձևերը (-*ացն*/*-եցն*/*-ցն*), օր.՝ *սնուցանել* (ԺԴ,50), *հասուցանել* (ԺԴ,93), *արժանացնել* (ԺԴ,325), *կանկնեցնել* (ԺԵ,Ա,586), *հեռացնել* (ԺԵ,Բ,161), որոնք ժառանգում է նաև արդի հայերենը: Ուշագրավ է, որ քննվող հիշատակարաններում քանիցս վկայված է կրավորական -*վ*- ածանցը, օր.՝ *կրտորվաւ*, *զընվաւ* (ԺԵ,Ա,565), *գտլնվիր*» (ԺԵ,Գ,13), որի միջոցով աստիճանաբար բայասեռի հստակ տարբերակում է կատարվում:

գ. Գրաբարյան խոնարհման համակարգում կատարված փոփոխությունների զգալի մասը վկայված է գրավոր այս հուշարձաններում: Հնացած և ավանդույթի ուժով գործածվող քերականական ձևերի կողքին գրիչներն անկաշկանդ կիրառում են նոր եղանակներն ու ժամանակաձևերը: Մեծ թիվ են կազմում սահմանական ներկա-անկատար ժամանակների *կու*-ով կազմությունները, որ ուրույն բաժանարար է լեզվի պատմության հին և նոր փուլերի համար, օր.՝ *կու տանք* (ԺԴ,226), *կու գրէի* (ԺԴ,258), *կու չարշարի* (ԺԵ,Բ,11): Հոգնակի առաջին դեմքում գրաբարի -*նք* մասնիկի փոխարեն աստիճանաբար ընդհանրանում է -*նք* վերջավորությունը, օր.՝ *կու տանք* (ԺԴ,226), *չգիտենք* (ԺԴ,425), *ունիք* (ԺԵ,Բ,382), *կերանք* (ԺԴ,307), որը պահպանվում է հայերենի հետագա զարգացման ընթացքում:

Բազմաթիվ օրինակներով վկայված են վաղակատար (-*ել*/*եր*) և հարակատար (-*ած*) ժամանակաձևերը, օր.՝ *գրել են* (ԺԴ,236), *կորեր էր* (ԺԵ,Ա,575), *հաներ էր* (ԺԴ,637), *թալնած ենք* (ԺԵ,Բ,283), *շինած էր* (ԺԵ,Բ,285):

Անցյալ կատարյալի կազմության մեջ հիմնական փոփոխությունը եզակի երրորդ դեմքում պատմական հնչյունափոխությամբ պայմանավորված -*եաց*>*եց* վերջավորության ձևավորումն է, օր.՝ *զլխագրեց* (ԺԴ,28), *շնորհեց* (ԺԵ,Գ,119), *զնեց* (ԺԵ,Գ,123), *շինեց* (ԺԵ,Գ,510):

³⁰ Հաշվումներն արված են մեր կողմից դուրս գրված դերբայների հիման վրա, թվերը միջինացված են: Կիրառել ենք ընտրողական սկզբունքը՝ յուրաքանչյուր դարաշրջանից առանձնացնելով տարբեր տարիներին գրված 100 հիշատակարան:

դ. Ստորադասական եղանակի աստիճանական վերացման գործընթացին զուգահեռ՝ ըստ իմաստի առաջանում են նոր եղանակներ՝ ըղծական, պայմանական և հարկադրական, որոնք համապատասխան ձևերով առատորեն վկայված են քննվող շրջանի հիշատակարաններում, օր.՝ *կու գրէի* (ԺԵ,Ա,456), *կառնեմ* (ԺԵ,Գ,34), *պիտի կերակրեր* (ԺԴ,156), *պիտի ժողովեն և սպանեն* (ԺԴ,275): Գրաբարի ստորադասական եղանակի կիրառությունը գրիչների լեզվում ձեռք է բերում ոճական արժեք կան դառնում է քարացած կառույց:

ե. Հրամայական եղանակի ձևերից գրիչները նախապատվությունը տալիս են բուն և արգելական հրամայականներին, իսկ հորդորական հրամայականը դարձյալ ոճականորեն երանգավորվում է: Բուն հրամայականի արտահայտության մեջ հիմնական փոփոխությունը, *ես>է* հնչյունափոխությամբ պայմանավորված, գրաբարյան ձևերի կողքին՝ եզակի թվում նոր վերջավորության աստիճանական ամրակայումն է, օր.՝ *քնքէ՛, գրէ՛* (ԺԴ,129), *պահէ՛* (ԺԵ,Գ,21): Որոշ դեպքերում էլ հորդորականի ձևերը հանդիպում են քարացած կառույցներում:

զ. Ժխտական խոնարհումը հիշատակարաններում գերազանցապես կազմվում է չ մասնիկի միջոցով, որ ավելանում էր օժանդակ բայի խոնարհված ձևերին:

է. Անկանոն բայերը և փոփոխության են ենթարկվում: Նախ հիշատակարաններում վերջինների կիրառությունը սահմանափակ է, որոշ բայեր ընդհանրապես վկայված չեն: Առավել հաճախ գրիչները գործածել են *առնել, տալ և գալ* բայերի համապատասխան ձևերը, իսկ ամենից շատ վկայված է *տալ* բայն իր ժամանակաձևերով:

Գլուխ Ե: Ոճական և շարահյուսական առանձնահատկությունները XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվում: Սույն գլուխը բաժանված է երկու ենթագլուխների: Առաջին ենթագլխում՝ *«Շարահյուսական առանձնահատկություններ»*, կարևորել ենք հիշատակարանների շարահյուսական ուսումնասիրության հարցը. առաջին անգամ փորձ է արվել ներկայացնելու շարահյուսական այն յուրահատկությունները, որոնք բնորոշ են հիշատակարաններին: Մեր համոզմամբ, այդ յուրահատկությունները բխում են բանավոր խոսքի հետ հիշատակարանների սերտ կապից: Հաճախ թվում է՝ գրիչը խոսում է ընթերցողի հետ: Վերջինս այնպես է կազմում իր խոսքը, որ ստացվում է ենթադրյալ երկխոսություն, որի միայն մեկ կողմի ձայնն է լսելի: Սրանով ևս գրավոր այս հուշարձանները դառնում են հատուկ գրական ժանր, և ներքին կապ է հաստատվում ստեղծագործողի (գրիչի) ու ընթերցողի միջև: Դա է այն հիմնական պատճառը, որ հիշատակարաններին առավելապես հատուկ են պատմողական բնույթի պարզ և բարդ նախադասությունների գրեթե բոլոր տեսակները: Ըստ որում՝ ամենամեծ թիվը կազմում են բարդ նախադասությունները. բարդ համադասական, ստորադասական և բազմաբարդ նախադասությունները զգալի թիվ են կազմում հիշատակարաններում, և բոլոր տեսակների մանրամասն նկարագրությունը, մեր կարծիքով, առանձին ուսումնասիրության նյութ կարող է դառնալ հետազայում:

Երկրորդ ենթագլխում՝ *«Ոճական առանձնահատկություններ»*, ներկայացվում են հիշատակարանների լեզվի ոճական առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ նախ տարբերակվում են «փառատրական» և «բուն հիշատակարան» հասկացությունները: Գրիչները զգալի տեղ էին հատկացնում ճարտասանական հնարանքներին, որոնք առատ արտահայտվել են հիշատակարանների փառատրական հատվածներում: Որոշ դեպքերում հիշատակարանի այդ մասը վերածվում էր դավանաբանական տարբեր հարցերի մեկնության, որ գրված էր խիստ գրաբարաոճ և վերամբարձ:

Ոճական տեսանկյունից առավել նշույթավորված է բուն հիշատակարանը. այստեղ գրիչները համոզես են գալիս ոչ միայն որպես ձեռագրի հետ կապված զանազան տեղե-

կույրյունների (գրիչ, վայր, ժամանակ և այլն) արձանագրող, այլև հաճախ աչքի էին ընկնում բանաստեղծական ոգով ու բարձր երևակայությամբ:

«Գիրս է խորին ծովու նման,
Ծածկեալ ի սա գանձ պատուական,
Լաւղորդ պիտի ճարտարաբան՝
Արտաքս բերտ զգանձս, որ աստ կան...» (ԺԵ,Բ,192):

Գրիչներին հատուկ ոճական հնարանք էր սեփական անձի նկատմամբ խիստ քննադատական մոտեցումը, որը երբեմն հանգեցնում էր ինքնամվաստացման: Այս ամենի ընթացքում ձևավորվում են նույնիսկ ինքնամվաստացման կայուն կաղապարներ, որոնք ընդհանուր են դառնում գրեթե բոլոր գրիչների համար:

Հիշատակարանների հեղինակները մեծ տեղ էին հատկացում բառակերտմանը: Նորակազմություններն աչքի էին ընկնում իմաստային նրբերանգներով, որի արդյունքում ձևավորվում էին բազմաթիվ հոմանշային շարքեր, որոնք, անշուշտ, հարստացնում էին հայերենի բառապաշարը: Սակայն պետք է նշել, որ դրանց մեծ մասը դիպվածային բառեր էին և տարածում չէին գտնում այլ աղբյուրներում:

Գրավոր այս հուշարձանները խիստ հարուստ են պատկերավորման միջոցներով: Առատորեն վկայված են մակդիրը, փոխաբերությունը, համեմատությունը, այլաբանությունը, անձնավորումը, շրջասույթը և այլն: Պատկերավորման նշված միջոցների հմուտ կիրառությամբ հիշատակարանները ձեռք են բերում նաև գեղարվեստական արժեք:

Սանրամասն քննությամբ պարզվեց մի հետաքրքիր հանգամանք ևս. գրիչները հնարավորինս խուսափում են *մահ* և *մեռնել* բառերի կիրառությունից՝ դրանց փոխարեն գործածելով զանազան այլասացություններ՝ «վճարեցաւ ի կենացս» (ԺԴ,24), «աւանդեաց զհոգին իւր ի ձեռն Աստուծոյ» (ԺԴ,32), «հանգեաւ առ Քրիստոս» (ԺԴ,341), «եմուտ առ Քրիստոս» (ԺԴ,348), «եհաս վախճան» (ԺԴ,358), «փոխեալքն ի կենցաղոյս» (ԺԴ,358), «թաւ աղանեկն յաչաց ինոց» (ԺԴ,412), «փոխեցան յաշխարհէս» (ԺԵ,Ա,581):

Հիշատակարանների լեզվում զգալի տեղ են զբաղեցնում դարձվածքները, որոնց միջոցով ևս գրիչներն ավելի ազդեցիկ են դարձնում իրենց խոսքը:

Գրիչների կողմից կիրառվող ոճական հնարանքների մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում հիշատակարաններում հանդիպող տարատեսակ ծածկագրերը, որոնց մեջ առավել մեծ թիվ են կազմում *կետագիծ* և *թվագիր* ծածկագրերը:

Հիշատակարանների գեղարվեստական արժեքի մասին ևս մեկ վկայություն են գրիչների կողմից բերվող անեծքներն ու օրհնանքները: Վերջիններիս նպատակը բացառապես ձեռագրերի պահպանությունն է:

Օր.՝ անեծք - «Ով որ զայս թղթերս կտրտ, թէ գիր չկայ ի ներս՝ աստուած զնա կտրտ ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորսն դիցէ, և զտանջանսն սատանայի արկցէ զգլխով նորա» (ԺԵ,Ա,243):

Օրհնանք - «Որ ոք սիրով սա ընթերցի/ Եւ փափաքմամբ ընդ սա խաւսի,/ Սրբոցս, որ աստ յիշատակի,/ Փառաց նոցին հաղորդ լիցի» (ԺԵ,Ա,231):

Ամփոփում

1. Հայերեն հիշատակարանները ձեռագրում տեղ են գտել մատյանի կազմման առաջին օրերից՝ V-VI դարերում՝ դառնալով ձեռագրի կարևոր բաղկացուցիչ միավոր: Մեր կարծիքով, վերջիններիս ժամանակի ճշգրտման հարցում էական նշանակություն ունեն հայերեն վիմագիր արձանագրությունները, նախագաղափար հիշատակարանները: Գրավոր այս հուշարձանների նախօրինակների վրա հնարավոր ենք համարում հունական ձեռագրակերտման ավանդույթների ազդեցությունը:

Ձևավորվելով V-VI դարերում և ժամանակի ընթացքում ենթարկվելով գրավոր մշակման IX-X դարերում ստեղծվում են հիշատակարանների օրինակելի նմուշներ, որոնք կրում են արդեն գրիչների հատուկ վերաբերմունքը:

2. Դարերի ընթացքում հիշատակարանը, որպես գրական և լեզվական իրողություն, անցել է զարգացման ինքնուրույն ուղի՝ արտացոլելով հայ ժողովրդի կյանքի և պատմության այնպիսի մանրամասներ, որոնք տեղ չեն գտել պատմիչների երկերում: Հիշատակարանը կրել է նաև մի շարք փոփոխություններ ինչպես ձևային, այնպես էլ բովանդակային առումով. հիշատակարաններ գրվում են ոչ միայն ձեռագրի տարբեր հատվածներում, այլև կազմի վրա:

3. XIV-XV դարերում (գուցե ավելի վաղ), անկախ գրչի կրթական մակարդակից, ձեռագրում հիշատակարանի կարևորությունը ստիպում է, որ գրչության կենտրոններում աստիճանաբար ձևավորվեն հիշատակարանի կաղապարներ:

4. Գրավոր այս հուշարձանների լեզվաբանական քննության կարևորության մասին միշտ էլ նշվել է ինչպես լեզվաբանների, այնպես էլ հիշատակարանների ժողովածուների հրատարակիչների կողմից, սակայն մինչ օրս արված ուսումնասիրությունները դեռևս ամբողջությամբ չեն լրացնում այդ բացը. լեզվական տեսանկյունից հիշատակարաններին առաջին հերթին անդրադարձել են հայ բառարանագրությամբ զբաղվողները, որոնք իրենց երկերում կարևոր տեղ են հատկացրել նշյալ աղբյուրներին, սակայն հիշատակարանների զուտ լեզվական քննության առումով մինչ օրս կատարված աշխատանքները երկուսն են՝ Լիանա Յովսեփյանի «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» և Գևորգ Ջահուկյանի «Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում» երկերը: Ուստի, վերոնշյալ հուշարձանների լեզվական ուսումնասիրությունն առանձին դարաշրջաններով հնարավորություն կտա ամբողջությամբ հետևելու հիշատակարաններում լեզվի զարգացման ընթացքին և լեզվական տարբեր փոփոխություններին:

5. XIV-XV դարերի հիշատակարանների հնչյունական առանձնահատկությունները մի կողմից օրինաչափ են և զալիս են դեռևս գրաբարից (ծայնավորների, երկբարբառների և եռաբարբառների փոփոխություններն ու պարզեցումը, բաղաձայնական համակարգում տեղաշարժ-տեղափոխությունները), մյուս կողմից առկա են զգալի թվով շեղումներ, որոնք բացատրելի են ոչ միայն ժամանակի գրական նոր լեզվի կամ բարբառների ազդեցությամբ, այլև հաճախ սխալագրություններով: Անգամ մինևույն հիշատակարանում նույն բառը կարող է գրվել մի քանի տարբերակով, որն առաջին հերթին ցույց է տալիս տվյալ գրչի՝ ուղղագրության ոչ բավարար իմացությունը:

6. Քննվող շրջանի հիշատակարաններում բառապաշարի տեսանկյունից ըստ կիրառության առաջին տեղն են զբաղեցնում գրաբարյան (շուրջ 60%), ապա՝ միջին-հայերենյան կազմությունները (շուրջ 30%), որոնց հաջորդում են միջինհայերենյան փոխառությունները (շուրջ 10%)³¹: Բառակազմության տեսանկյունից նախապատվությունն առավելապես տրվում է *SfS* (արմատ+հոդակապ+արմատ, ինչպես՝ *Քարահաշտ* (ԺԵ,Բ, 176), *Վսենածեն* (ԺԳ,536)) կաղապարին և նրա ենթատեսակներին:

7. XIV-XV դարերի հիշատակարաններում հոգնակերտների կիրառության հաճախականությամբ ամենամեծ թիվը կազմում են գրաբարյան *-ք-*ն կամ նրանով բաղադրված (*-որայք*, *-ունք*, *-անք* և այլն) հոգնակերտները (շուրջ 78%), վերջիններիս հաջորդում են *-եր/-ներ* հոգնակերտները (մոտ 15%), ապա՝ *-նի* (5%) և *-ան* (2%) հոգնա-

³¹ Բառաշերտերի կիրառության տոկոսային հարաբերությունը կազմել ենք մեր կողմից քարտավորված առանձին բառացանկերի համաձայն, որոնց ճշգրտման համար հիմք են ծառայել ՆՅԲ-ն, ԳԲ-ն և ՍՅԲ-ն:

կերտները: Հոգնակիի կազմությանը մասնակցող մյուս մասնիկները վկայված են եզակի օրինակներով:

8. Նշյալ աղբյուրներում գրեթե ամբողջությամբ նույնացել են ուղղական և հայցական հոլովները: Որպես տարբերակիչ հատկանիշ մնում է *զ* նախդիրը:

Ձևով նույնացել են նաև սեռական և տրական հոլովները: *Ի* արտաքին թեքումն աստիճանաբար դառնում է ընդհանրական, պարզեցվում են խառը հոլովումները: *Ոջ* վերջավորությամբ սեռական և տրական հոլովների ձևերը սակավ վկայվածություն ունեն: Անկանոն կամ զարտուղի հոլովումները ևս պարզեցվում են:

Բացառական հոլովը քննվող շրջանի հիշատակարանների լեզվում առավելապես նախդրավոր կառույց է, սակայն աննախդիր բացառականի բազմաթիվ օրինակները վկայում են սույն հոլովի աստիճանական պարզեցման մասին:

Վկայված օրինակները ցույց են տալիս, որ գործիական հոլովում աստիճանաբար ամրապայմուն է *-ու/հոլովակերտ* մասնիկը:

Ներգոյական հոլովը էական փոփոխություններ չի կրում, այն հիմնականում նախդրավոր է. առավելապես կիրառվում է *ի + հոգն. հայց. կառույցը*: Ներգոյականի աննախդիր ձևերը ևս գործածվել են: *-Ում* վերջավորությամբ մի քանի բառ է վկայված XIV-XV դարերի հիշատակարաններում (*երկրում, քաղաքում, գեղում, յայսպիսում*):

Դերանունների կիրառությամբ ամենամեծ թիվը կազմում են ցուցական և ստացական դերանունները: Գրաբարյան ձևերին զուգահեռ՝ վկայված են միջինհայերենյան դերանվանածներ: Նկատելի է *մեք* անձնական դերանվան անցումը *մենք*-ին:

Քննվող գրավոր աղբյուրներում առատորեն վկայված են ստացական, ցուցական և դիմորոշ հոդերը, սակավ քանակությամբ վկայված է նաև *մի* անորոշ հոդը:

Ածականը և թվականը գոյականների հետ առավելապես նախադաս դիրքում են գործածվում և սովորաբար չեն համաձայնում հոլովով ու թվով. սա հանգեցնում է այդ կարգերի վերացմանը ածական և թվական խոսքի մասերի համար:

Մակբայները, շաղկապները և եղանակավորող բառերը գրաբարի համենատուրյամբ էլ էական փոփոխություններ չեն կրում սույն աղբյուրներում:

9. Քննվող շրջանի հիշատակարաններում վկայված են հայերենի բոլոր դերբայներն իրենց համապատասխան փոփոխություններով, որոնք ուրվագծում են համակարգի զարգացման ընթացքը: Գրաբարյան չորս դերբայներին զուգահեռ՝ (անորոշ, ենթակայական, ապառնի և անցյալ) գրիչներն արդեն գործածում են դերբայական նոր ձևերը (վաղակատար, հարակատար, ժխտական): Ըստ որում՝ դերբայներից ամենամեծ կիրառությունն ունի վաղակատարը՝ *-ել/-եր* վերջավորություններով: Եզակի օրինակներով վկայված են նաև հայերենի անկատար դերբայի *-ուի-ով* և *-իս-ով* ձևերը, որոնք հատուկ են արդեն լեզվի զարգացման աշխարհաբարյան փուլին:

10. Բայակազմությանը մասնակցում են գրաբարյան բոլոր բայածանցները: Ըստ որում՝ ամենամեծ հաճախականություն ունեն սոսկածանցները, իսկ ամենասակավը՝ բազմապատկանները: Ձուգահեռաբար կիրառվում են պատճառական ածանցի և՛ գրաբարյան (*-ուցան*), և՛ միջինհայերենյան ձևերը (*-ացն/-եցն/-ցն*), որոնք ժառանգում է նաև արդի հայերենը: Ուշագրավ է, որ քննվող հիշատակարաններում քանիցս վկայված է կրավորական *-վ-* ածանցը, որի միջոցով աստիճանաբար բայասեռի հստակ տարբերակում է կատարվում:

11. Գրաբարյան խոնարհման համակարգում կատարված փոփոխությունների զգալի մասը վկայված է գրավոր այս հուշարձաններում: Հնացած և ավանդույթի ուժով գործածվող քերականական ձևերի հետ մեկտեղ գրիչներն անկաշկանդ կիրառում են բայական նոր եղանակներն ու ժամանակածները: Մեծ թիվ են կազմում սահմանական ներկա-անկատար ժամանակների *կու-*ով կազմությունները, որ ուրույն բաժանարար է լեզվի պատմության հին և նոր փուլերի համար: Հոգնակի առաջին դեմքում գրաբարի -

մը մասնիկի փոխարեն աստճանաբար ընդհանրանում է -մը վերջավորությունը. այն պահպանվում է նաև հայերենի հետագա զարգացման ընթացքում: Բազմաթիվ օրինակներով վկայված են սահմանական եղանակի վաղակատար և հարակատար ժամանակաձևերը: Անցյալ կատարյալի կազմության մեջ հիմնական փոփոխությունը եզակի երրորդ դեմքում, պատմական հնչյունափոխությամբ պայմանավորված, -եաց>եց վերջավորության ամրակայումն է:

12. Ստորադասական եղանակի աստիճանական վերացմանը զուգահեռ՝ նրա իմաստների արտահայտման համար առաջանում են նոր եղանակներ՝ ըղծական, պայմանական և հարկադրական, որոնք համապատասխան ձևերով առատորեն վկայված են քննվող շրջանի հիշատակարաններում: Գրաբարի ստորադասական եղանակի կիրառությունը գրիչների լեզվում ձեռք է բերել ոճական նպատակ կամ դարձել է քարացած կառույց՝ գրաբարաբանություն:

13. Հրամայական եղանակի ձևերից գրիչները նախապատվությունը տալիս են բուն և արգելական հրամայականներին, իսկ հորդորական հրամայականը դարձյալ ոճական նպատակադրումով է կիրառվում: Որոշ դեպքերում էլ հորդորականի ձևերը կազմում են քարացած կայուն կապակցություններ:

14. Ժխտական խոնարհումը հիշատակարանների լեզվում գերազանցապես կազմվում է չ մասնիկի միջոցով, որն ավելանում էր օժանդակ բայի խոնարհված ձևերին:

15. Անկանոն բայերը ևս փոփոխության են ենթարկվում: Նախ հիշատակարաններում վերջիններիս կիրառությունը սահմանափակ է, որոշ բայեր ընդհանրապես վկայված չեն: Առավել հաճախ գրիչները գործածել են *առնել*, *տալ* և *գալ* բայերի համապատասխան ձևերը, իսկ ամենից շատ վկայված է *տալ* բայն իր ժամանակաձևերով:

16. Շարահյուսության ուսումնասիրությունը քննվող շրջանի հիշատակարաններում ցույց է տալիս, որ առավելապես մեծ թիվ են կազմում բարդ համադասական և ստորադասական կառույցները՝ համաստորադասության և ենթաստորադասության տարբերակներով: Կան բազմաբարդ կառույցներ, որոնք հարուստ նյութ կարող են տրամադրել հետագա ուսումնասիրողներին:

17. Գրիչները զգալի տեղ էին հատկացնում ճարտասանական հնարանքներին, որոնք երբեմն ընդգծված կերպով արտահայտվում էին հիշատակարանների փառատրական հատվածներում: Որոշ դեպքերում հիշատակարանի այդ մասը վերածվում էր դավանաբանական տարբեր հարցերի մեկնության, որը շարադրված էր խիստ գրաբարաճ և վերամբարձ:

18. Ոճական տեսանկյունից առավել երանգավորված է բուն հիշատակարանը. այստեղ գրիչները հանդես են գալիս ոչ միայն որպես ձեռագրի հետ կապված զանազան տեղեկությունների (գրիչ, վայր, ժամանակ և այլն) արձանագրող, այլև հաճախ աչքի էին ընկնում բանաստեղծական ոգով ու բարձր երևակայությամբ:

19. Գրիչներին հատուկ ոճական հնարանք էր նաև սեփական անձի նկատմամբ խիստ քննադատական մոտեցումը, որը երբեմն հանգեցնում էր ինքնամվաստացման:

20. Հիշատակարանների հեղինակները մեծ տեղ էին հատկացնում բառակերտմանը: Նորակազմություններն աչքի էին ընկնում իմաստային նրբերանգներով և բառակազմական ճկունությամբ, որի արդյունքում ձևավորվում էին բազմաթիվ հոմանշային շարքեր, որոնք, անշուշտ, հարստացնում էին հայերենի բառապաշարը: Սակայն պետք է նշել, որ դրանց մեծ մասը դիպվածային բառեր էին և տարածում չէին գտնում այլ աղբյուրներում:

21. Գրավոր այս հուշարձանները խիստ հարուստ են պատկերավորման միջոցներով: Առատորեն վկայված են մակդիրը, փոխաբերությունը, համեմատությունը, այլաբանությունը, անձնավորումը, շրջասույթը և այլն: Պատկերավորման այս միջոց-

Ների հմուտ կիրառությամբ հիշատակարանները ձեռք են բերում գեղարվեստական արժեք: Հիշատակարանների լեզվում զգալի տեղ են զբաղեցնում դարձվածները, որոնց միջոցով գրիչներն ավելի ազդեցիկ են դարձնում իրենց խոսքը:

22. Քննության արդյունքում պարզվեց մի հետաքրքիր հանգամանք. գրիչները հնարավորինս խուսափում են *մահ* և *մեռնել* բառերի կիրառությունից՝ դրանց փոխարեն գործածելով զանազան այլասացություններ:

24. Գրիչների կողմից կիրառվող ոճական հնարանքների մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում հիշատակարաններում հանդիպող տարատեսակ ծածկագրերը, որոնց մեջ առավել մեծ թիվ են կազմում *կետագիծ* և *թվագիր* ծածկագրությունները:

25. Հիշատակարանների գեղարվեստական արժեքի ևս մեկ վկայությունն են գրիչների կողմից բերվող անծեքներն ու օրհնանքները: Վերջիններիս նպատակը բացառապես ձեռագրերի պահպանությունն է:

Այսպիսով, XIV-XV դարերի հիշատակարանների լեզուն հիմնականում զրաբար է, թեև վկայված են միջինհայերենյան և բարբառային տարբեր իրողություններ՝ թե՛ հնչյունական, թե՛ բառապաշարային, թե՛ քերականական մակարդակներում: Սակայն արձանագրված այս շեղումները համակարգային բնույթ դեռ չեն կրում, սահմանափակվում են եզակի օրինակներով, որոնք մատնանշում են լոկ հայերենի զարգացման հետագա ուղիները՝ բաղաձայնների տեղաշարժերը, երկբարբառների, եռբարբառների պարզեցումները, քերականության մեջ կցական կառույցների ավելացումը թեքականության նվազման շնորհիվ և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հոդվածներում՝

1. *«Հայկական ձեռագիր հիշատակարանը և լեզվական քննության զարգացման հեռանկարները»*, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, Ստեփանավերտ, 2012, էջ 86-87:
2. *«Դոկվման համակարգը XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում»*, Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 12-13 ապրիլի 2012թ, էջ 85-93:
3. *«14-15-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ոճական մի քանի առանձնահատկությունների մասին»*, հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին, Վանաձոր, 2013, էջ 97-106:
4. *«14-15-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների բառապաշարի քննություն»* Ջահուկյանական ընթերցումներ, հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, Եր., 2013, էջ 78-85:
5. *«Խոնարհումը XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվում»*, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2013, էջ 58-69:
6. *«XIV-XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվի հնչյունական հիմնական բնութագիրը»*, Բանբեր Մատենադարանի 20, Եր., 2014, 175-187:

ХАЧИК АРАМОВИЧ АРУТЮНЯН
ЯЗЫК КОЛОФОНОВ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ XIV-XV ВВ.

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по
специальности 10.02.01 - Армянский язык

Защита состоится 16 июня 2014 года в 15:00, на заседании специализированного совета
по лингвистике 019 ВАК при Институте языка им. Гр. Ачаряна НАН РА
(адрес: 0015, Ереван, ул. Гр. Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Изучение колофонов (памятных записей) армянских рукописей особенно важно для исследования истории армянского языка, однако, имеющиеся исследования не отражают в достаточной степени все фонетические, словообразовательные, морфологические, синтаксические и стилистические особенности, присущие колофонам.

Избранная тема актуальна, поскольку исследование колофонов может выявить взаимоотношения габара (древнеармянского языка) и среднеармянского языка, народно-разговорной речи, диалектов, а также наметить тенденции развития языка. Изучение колофонов разных эпох предоставляет возможность полностью проследить за процессом развития языка и выявить его качественные изменения.

В работе впервые исследован язык колофонов XIV-XV вв. с точки зрения его фонетического, словообразовательного, морфологического, синтаксического и стилистического строя. Цели диссертации таковы:

1. выявить шаблонную структуру колофонов и её влияние на язык переписчиков,

2. выяснить фонетические и словообразовательные особенности языка колофонов по сравнению с габаром,

3. показать изменения в системах склонения и спряжения в языке колофонов по сравнению с габаром,

4. выявить синтаксические и стилистические особенности языка колофонов.

Результаты этого исследования могут быть полезны для специалистов, занимающихся историей, исторической диалектологией, стилистикой армянского языка и другими отраслями арменоведения.

Диссертация состоит из следующих глав и разделов:

Введение. Колофоны армянских рукописей как источники изучения истории армянского языка. История вопроса,

Глава I. История колофонов армянских рукописей: возникновение и развитие,

Глава II. Основные фонетические и словообразовательные особенности языка колофонов XIV-XV вв.:

а. Фонетическая характеристика,

б. Словообразование в языке колофонов,

Глава III. Склонение в языке колофонов XIV-XV вв.,

Глава IV. Спряжение в языке колофонов XIV-XV вв.,

Глава V. Синтаксические и стилистические особенности армянских колофонов XIV-XV вв.,

а. Синтаксические особенности,

б. Стилистические особенности.

Основные выводы исследования следующие:

1. Армянские колофоны появились с первых же дней возникновения рукописной книги, в V-VI вв., став её важной составной частью. Мы считаем, что колофоны наряду с армянскими эпиграфическими надписями имеют важное значение для датировки первоисточников. Последующее развитие колофонов приводит к возникновению шаблонов, которые влияют на язык переписчиков.

2. Фонетические особенности колофонов XIV-XV вв., с одной стороны, закономерны и восходят к грабару (изменения гласных, упрощения дифтонгов и трифтонгов, передвижения в системе согласных), а с другой стороны, присутствует значительное количество отклонений, которые можно объяснить не только влиянием среднеармянского литературного языка и диалектов, но иногда и ошибками переписчиков.

3. В лексике исследованных колофонах первое место по частотности занимают слова древнеармянского языка (примерно 60%), затем формы среднеармянского языка (примерно 30%), и примерно 10% представляют заимствования осуществленной в среднеармянский период.

4. В колофонах XIV-XV вв. по частоте использования окончаний множественного числа первое место занимает древнеармянская форма *-p*, или ее комбинации с другими формантами множественного числа (*-prip*, *-nip*, *-uip*) (примерно 78%), за ними следуют формы множественного числа *-tṛ*, *-ūtṛ* (примерно 15%), а затем формы *-h* (5%) и *-uh* (2%).

5. В колофонах XIV-XV вв. всё ещё доминируют древнеармянские формы склонения, но наряду с ними широко засвидетельствованы также среднеармянские формы, которые предопределяют направление языкового развития. Заметно распространение склонения на *h* и упрочение позиций окончания *-nč* в творительном падеже, упрощаются также неправильные склонения.

6. Параллельно с четырьмя причастиями грабара (инфинитив, субъектное, будущее и прошлое) переписчики часто используют новые формы причастий (давно прошедшего, результативного прошедшего и отрицательного). В формировании глагола сохраняются все глагольные аффиксы грабара. Значительное число составляют формы настоящего времени изъявительного наклонения с частицей *lul*. В первом лице множественного числа вместо частицы *-čp* древнеармянского языка постепенно распространяется использование окончания *-čp*. Использование древнеармянского побудительного императива в языке переписчиков обретает стилистическую значимость в качестве архаизмов. Среди форм повелительного наклонения переписчики отдают предпочтение основному императиву и его запретительной форме. Неправильные глаголы также претерпевают изменения.

7. Колофоны армянских рукописей богаты применением выразительных средств: эпитетами, метафорами, фразеологизмами и стилистическими оборотами.

KHACHIK ARAM HARUTYUNYAN

THE LANGUAGE OF COLOPHONS OF ARMENIAN MANUSCRIPTS OF THE 14TH-15TH CENTURIES

Dissertation on Candidate's Degree in Philological Sciences on the Specialization 10.02.01 -
The Armenian Language

The Defense will be held at the Address: 0015, RA, Yerevan, Grigor Lusavorich 15, Institute
of Language after Hr. Acharyan of the National Academy of Sciences, at the session of
Specialized Council of Linguistics 019 HAC, at 15:00, 16.06.2014

SUMMARY

The study of colophons of Armenian manuscripts takes a significant issue from the perspective of history of the Armenian language, in particular. However, the previous language examination done until now is limited in scope and many important issues concerning the phonetic, lexical, morphological, syntactic and stylistic characteristic features have not been covered in colophons.

The selected theme is actual since the examination of colophons which are believed to be primary sources for the history of the Armenian language can elucidate the interrelations between of the Classical Armenian (Grabar) and Middle Armenian in the spoken language. In addition, it gives a comprehensive account of the tendencies emerged in the course of the development of different substructures of the language. The language examination according to the separate centuries will give an opportunity to ponder thoroughly about the evolving stages of the language and put forth the changes of the language quality in colophons.

For the first time, in addressing deep inspection of the colophons' language of the 14th-15th centuries from phonetic, lexical, morphological, syntactic and stylistic prism, we may break a new ground in the given field by demonstrating the basic goals of our thesis, which may now be followed in this way:

1. explore the patterned character of colophons and the impact of the latter on the scribes' language.
2. find out phonetic and lexical characteristic features in the language of colophons of the mentioned centuries in comparison with Grabar.
3. demonstrate the variations in the systems of declension and conjugation occurred in the language of colophons again compared with Grabar.
4. explore syntactic and stylistic distinguishing features of the colophon language.

The results of the study can provide useful clues for the researchers of the following aspects, namely: the history of the Armenian language, dialectology, stylistics, codicology and so forth.

In due course of our study, the thesis has been divided into the following chapters and subchapters:

Introduction: the colophons of Armenian manuscripts as a source study of history of the Armenian language. The history of the issue.

Chapter 1: The history of Armenian manuscript colophon: origin and development.

Chapter 2: The main phonetic and lexical description of the colophons' language of Armenian manuscripts in the 14th-15th centuries.

a. The phonetic features.

b. The lexicology in the colophons' language of the 14th-15th centuries.

Chapter 3: The declension in the colophons' language of Armenian manuscripts of the 14th-15th centuries.

Chapter 4: The conjugation in the colophons' language of Armenian manuscripts of the 14th-15th centuries.

Chapter 5: The stylistic and syntactic distinguishing features in the colophons of Armenian manuscripts of the 14th-15th centuries.

a. The syntactic distinguishing features.

b. The stylistic distinguishing features.

Conclusion:

Basic conclusions:

1. The Armenian colophons have been introduced into the manuscript since their origin, i.e. the 5th- 6th centuries, becoming an indispensable constituent unit of the manuscript. The further development of colophons brought into the emergence of the pattern, which, in its turn, had its impact on the scribes' language as well.

2. On the one hand, the phonetic distinguishing features of the colophons of the 14th-15th centuries are regular and they can be traced back to Grabar (changes and simplification of vowels, diphthongs and triphthongs, the variation in the consonant system), on the other hand, a considerable number of shifts may emerge. This phenomenon can be explained not only by the impact of the standard language and dialects of the given time, but also, by incorrect writings.

3. In terms of the vocabulary according to the usage, in colophons of the examined period the classical Armenian formations prevail (about 60%), then middle Armenian formations (about 30%) that are followed by middle Armenian loan words (about 10%).

4. In colophons of the 14th-15th centuries, within the frequent usage of the plural forming endings, the classical Armenian *-p* index forms a great number or other plural forming (*-նրայք, -նւնք, -ւնք*) indexes in consistent with it may domineer (about 78%), the latter follows *-էր/-նէր* plural forming suffixes (about 15%), then *-նի* (5%) and *-ւն* (2%) plural forming endings.

5. The nominal declension in colophons of the 14th-15th centuries mainly reflects that of Classical Armenian. Nevertheless, we also find Middle Armenian structures that bear witness to the ongoing development of the language. One may notice the generalization of *-ի* declension and the regular usage of *-նի* endings in the instrumental case.

The irregular cases are simplified.

6. In parallel with four classical impersonal forms of verbs (infinitive, present participle, future participle and past participle), the scribes employ lavishly new impersonal forms of verbs (past participle, effective participle and negative participle). All the verbal affixes participate in

the verb formation. The *-լմ* formation of the present-imperfective tense of the indicative mood forms a great number. The 1pl. ending *-ւք* is gradually replaced by *-իք*. In the scribes' language, the usage of the classical necessitative mood obtains a stylistic value and becomes a petrified structure. As to the imperative, the scribes give a preference to the authentic imperative and the prohibitive forms. The irregular verbs also undergo to variations.

7. The colophons of Armenian manuscripts also abound in various stylistic figures and devices which the scribes create and master on the high level.